ԲՆԱԳՐԵՐ

Թ ԴԱՐԻ ՊԱՏՄԻՉՆԵՐ

ԱԲՈՒ ՅՈՒՍՈՒՖ (731 – 798)

Յակուբ իբն Իբրահիմ ալ-Անսարի ալ-Քուֆի Աբու Յուսուֆը ականավոր կրոնական իրավագետ էր, հանիֆիական կրոնա-իրավագիտական դպրոցի (սաղհարի) հիմնադիրներից մեկը: Նա ուսանել է Քուֆայում ու Մադինայում, որտեղ նրա ուսուցիչներն են եղել Աբու Հանիֆան, Մալիք իբն Անասը, ալ-Լայս իբն Սաադը և ուրիշներ: Հետագայում ապրել է Քուֆայում, մինչև որ դատավոր նշանակվեց Բաղդադում, որտեղ նա վարեց այդ պաշտոնը մինչև իր մահը՝ 798 թվականին: Տեղեկություն կա, որ նա իր կյանքի ընթացքում այցելել է նաև Բասրա քաղաքը: Աբու Յուսուֆը ժամանակի ընթացքում դարձավ Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի մերձավոր և վստահելի անձանցից մեկը, այն աստիճան, որ խալիֆան, իսլամի պատմության մեջ առաջին անգամ, նրան շնորհեց Դատավորաց դատավոր (կադի լ-կուդատ) կոչումը: Սա մի պատվավոր տիտղոս էր և որևէ կոնկրետ ֆունկցիա չէր նախատեսում: Միաժամանակ հատկանշական է, որ Հարուն ալ-Ռաշիդը նրա հետ խորհրդակցում էր ոչ միայն մահմեդական իրավունքի, այլև ֆինանսական քաղաքականության և նման այլ հարցերում: Ավելին, նրա հետ քննարկում էր խալիֆայության տարբեր մասերում դատավորների նշանակման հարցը:

Հարուն ալ-Ռաշիդի գլխավոր դատավոր Աբու Յուսուֆի «Հարկերի մատյանը» (Քիտաբ ալ-Խարաջ) կազմվել է խալիֆայի պատվերով: Այս երկը իր անվանումից ավելի լայն ընդգրկում ունի, քանի որ անդրադառնում է ողջ կառավարման ոլորտին՝ ջրային իրավունքից մինչև ռազմական գործը:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Abu Yusuf, Kitab al-Kharaj, Cairo, 1302/1885. (Abu Yusuf, J. Schacht, EOI, CD-ROM, (I: 164a), Х. А. Р. Гибб, Арабская литература, Москва, 1960, стр. 43)

Տե՛ս նաև. - Edmond Fagnan, Livre de l' impot foncier, Paris, P. Geuthner, 1921. 352 p. Абу Йусуф, Китаб ал-Харадж, С-Пб, 2001, 399 с.